



ԼՐԱԳՐՈՂԻՆ ԲԱՆԱՎԵՃԻՆ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

Նախընտրական բանավեճ վարող լրագրողը պետք է բոլորին միանման վերաբերվի, նախապատվություն չտալով որևէ մեկին և ցույց չտալով մասնակիցներից որևէ մեկին իր հակակրանքը կամ թշնամանքը:

Հանդիսատեսն ու դիտորները պետք է հավատան կողմերից առնվազն մեկին. այն է լրագրողը: Նա է դառնում անկախության երաշխիքը և հանդիսանում ընտրողի փաստաբան: Այդ պարագայում միջոցառման բոլոր մասնակիցներին տալիս է հավասար և թափանցիկ հնարավորություններ:

Բանավեճ վարող լրագրողը պետք է բանավեճի մասնակիցների կողմից իրեն ուղղված հարձակումների հանդեպ ամուր լինի: Անգամ, եթե դրանք իրական չեն, նա պետք է քննարկումներ հարձակման նյութի շուրջ չնախաձեռնի, որպեսզի դրանք չդառնան հանդիպման թեման:

Բանավեճ վարող լրագրողի նախապատրաստում

- ծանոթացիր բանավեճին մասնակցող բոլոր ընտրական հանձնաժողովների/ թեկնածուների ընտրական ծրագրերին,
- ծանոթացիր երկրի/ տեղական հանրության/ հատկապես տարածաշրջանի, որտեղ քն հեռուստատեսությունն է գործում կամ թերթն է հրատարակվում, ղեկավարման գծով տվյալ կուսակցության/ ընտրական հանձնաժողովների/ թեկնածուների կատարած աշխատանքներին: Ստուգիր նրանց գործունեությունը ոչ միայն վերջին ժամանկաշրջանում, այլև տարիների ընթացքում: Պետք է կարողանաս համեմատել վերջին հայտարարված դիտակետները նրանց հետ, որոնք կայացվել են անցյալում:
- դուրս գրիր արխիվային արտահայտություններից, ընտրական ծրագրերի հատվածներից, հանրային հայտարարություններից, հարցազրույցներից կատարված մեջբերումները,
- պետք է լավ տիրապետես ամենաթարմ թեմաներին և իրադարձություններին, որոնք էական են երկրի/ տարածաշրջանի արդի պատմության մեջ, հատկապես այն

Թեմաներին և իրադարձություններին, որոնց անդրադարձ է կատարվելու Բանավեճի թեմաներում:

Բանավեճի թեման

Բանավեճի թեման և հարցադրումները պետք է արտացոլեն ընտրողների և միաժամանակ մեր ընթերցողների/ հանդիսատեսի համար կարևոր խնդիրները:

Այդ պատճառով՝

- խորհիր, թե վերջին ընտրություններից հետո ինչ իրադարձություններն են գերակշռել քո ընթերցողների/ հանդիսատեսի հասարակական կյանքում,
- քո արխիվներն ուսումնասիրելով՝ ստուգիր, թե այդ իրադարձություններից, որոնք են ամենաբուռն էմոցիաներ առաջացրել,
- կենտրոնացիր նրանց վրա, որոնք թիրախավորված են եղել անմիջապես մարդու (ընթերցողների/ հանդիսատեսի) վրա, սակայն մի զբաղվիր անահատական իրադարձություններով: Ուսումնասիրիր այդ ոլորտում իշխանությունների կողմից կայացված որոշումները և դրանց հետևանքները:
- օգտագործիր համացանցը ներգրավելու ընտրողներին (ընթերցողներին/ հանդիսատեսին) Բանավեճի պատրաստման գործում,
- խրախուսիր նրանց քո թերթի/ հեռուստաընկերության/ ռադիոյի կայքում կամ հանրային պրոֆիլում տեղադրեն այն իրադարձությունները, որոնք խնդիր է եղել, բայց իշխանությունները չեն կարողացել այդ հարցը կարգավորել ըստ նրանց,
- ընտրիր այն թեմաներն ու հարցադրումները, որոնք ամենից հաճախ են ի հայտ գալիս,
- հնարավորության դեպքում հանձնարարիր սոցիոլոգիական հարցումների անցկացումն այն տարածքի համար, որին վերաբերում է Բանավեճը: Հարցազրուցավարների համար առանձնացրու և սահմանիր այն հարցերն ու խնդիրները, որոնք պետք է նպատակուղղված լինեն ուսումնասիրվող հանրությանը:

Մարդկանց ակտիվության միջոցով ենք ընտրում թեմաներն ու հարցերը:

Դու ընտրողների (քո ընթերցողների/ հանդիսատեսի) փաստաբանն ես. դա քո առավելությունն է:

Նյութը հասանելի է Creative Commons «Հեղինակային իրավունքների ճանաչում – նույն պայմաններով 4.0 Միջազգային» լիցենզիայի (CC BY-SA 4.0) հիման վրա: Որոշ իրավունքներ վերապահվում են ի օգուտ նյութի հեղինակ Բարտոշ Սկիրայի, ինչպես նաև Արևելք ժողովրդավարական ընկերակցության: Ստեղծագործությունը ծնվել է «Հայաստան՝ տեղական անկախ լրատվամիջոցների դերը ընտրական գործընթացում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Արևելք ժողովրդավարական ընկերակցության կողմից՝ կրառելով Լեհ-ամերիկյան ազատության հիմնադրամի միջոցները: Թույլատրվում է բովանդակության ազատ կիրառումը սույն տեղեկատվության պահպանման պայմանով, այդ թվում՝ կիրառված լիցենզիայի, իրավունքներ տիրապետողների, ինչպես նաև «Հայաստան՝ տեղական անկախ լրատվամիջոցների դերը ընտրական գործընթացում» ծրագրի մասին տեղեկատվության պահպանման պայմանով:

Լիցենզիայի բովանդակությունը հասանելի է հետևյալ կայքում՝
<https://creativecommons.org/licenses/by-sa/4.0/deed.pl>.

Տեղական անկախ լրատվամիջոցների դերը ընտրական գործընթացում՝ տեղական լրատվամիջոցների հայ լրագրողների համար դասընթաց

Կազմակերպիչ՝ **Արևելք ժողովրդավարական ընկերակցություն**

Գործընկեր կազմակերպություն՝ **Երևանի մամուլի ակումբ**

Գյումրի՝ 2017թ-ի փետրվարի 23-24

Վանաձոր՝ 2017թ-ի փետրվարի 25-26

Օրագիրը համաֆինանսավորվել է Լեհ-ամերիկյան ազատության հիմնադրամի միջոցներով՝ RITA – փոփոխություններ տարածարշանում ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Հանուն ժողովրդավարության կրթություն հիմնադրամի կողմից:



ԲԱՆԱՎԵՃԻ ՍՑԵՆԱՐԸ ԻՆՉՊԵՍ ԼԵԳՈ

Բանավեճի սցենարն իրենից ներկայացնում է ամբողջ միջոցառման կառուցվածքի մանրակրկիտ նկարագրություն, որը ներառում է՝

- ով է սկսում բանավեճը,
- ինչ հերթականությամբ են ներկայացվելու հանձնաժողովները ներկայացնող անձիք,
- ինչ հերթականությամբ են պատասխանելու, արդյոք հնարավորություն ունեն պատասխան հարված տալու համար, ինչ սկզբունքներով,
- ինչ հերթականությամբ է ընթանալու վերջին խոսքի տրամադրումը՝ բանավեճի վերջում, թե յուրաքանչյուր մասում:

Բանավեճի սցենարը ունի միայն երկու կայուն և անփոփոխ դիրք՝

- սկիզբ, այսինքն միջոցառման մասնակիցների ներկայացում,
- վերջին խոսք՝ արտահայտված ընտրական հանձնաժողովների ներկայացուցիչների կողմից:

Մնացած բաղադրիչները հիշեցնում է ԼԵԳՈՅԻՑ կառույցի պատրաստում, այսինքն այն կարելի է ցանկացած ձևով պատրաստել:

Երկու տեսակ լեգո կա՝

- **բովանդակության վերաբերյալ հարցեր**, այսինքն թեմաներ և խնդիրներ, որոնց պետք է անդրադառնան ընտրական հանձնաժողովների ներկայացուցիչները, օրինակ՝ անվտանգությունը, առողջապահությունը, կրթությունը,

- **հարցադրումներ կատարելու ձևը և լրագրողի դերը** բանավեճում, օրինակ բանավեճի մի մասում լրագրողներն են հարցեր տալիս, հաջորդ մասում՝ հանդիսատեսը, մասնագետները կամ հանձնաժողովների ներկայացուցիչները միմյանց են ուղղում հարցերը:

ԼԵԳՈՅԻ երկու տեսակներն էլ պետք է փոխլրացնեն իրար և ազդեն բանավեճի գրավչության վրա:

Բանավեճի հետաքրքրությունը ապահովող կարևոր գործոն է հանդիսանում հարցադրումներ տալու ձևի հետ կապված գաղափարը:

Կարող են դա անել՝

► **լրագրողները** /մեկը կամ մի քանիսը/, օրինակ՝ բանավեճի առանձին մասերի համար նշանակվում է մեկ լրագրող,

► **հանդիսատեսը** /բանավեճին ներկա հանդիսատեսը, համացանցում հետևողները, հեռախոսագանգով միացած կամ ձայնագրված հանդիսատեսը/: Այս պարագայում լրագրողը կատարում է համակարգողի և միաժամանակ հարցադրում կատարող անձի փաստաբանի դեր: Նա պետք է վերահսկի, որպեսզի բանավեճի մասնակիցները պատասխանեն տրված հարցին,

► **մասնագետները** - այս պարագայում լրագրողը համակարգողի դեր է կատարում, իսկ էական հարցերը տալիս են նշանավոր մասնագետները: Խնդիր է ծագում այն պարագայում, երբ նրանց անկախությունը կասկածի տակ է դրվում ընտրական հանձնաժողովի ներկայացուցչի առնվազն մեկի կողմից,

► **ընտրական հանձնաժողովների ներկայացուցիչները միմյանց են հարցեր ուղղում** – այս պարագայում պարտադիր է սահմանել՝

- ինչքան է տևելու հարցն ու պատասխանը,

- արդյոք հարց տվող անձն իրավունք ունի պատասխան հարվածի, որը նույնպես պետք է ունենա սահմանված ժամանակ,

- ով ում է հարց տալիս և ինչ հերթականությամբ: Հերթականությունը պետք է որոշվի վիճակահանությամբ, այն, թե ով ում է հարց տալիս կապված է մասնակիցների քանակից և նրանից, թե արդյոք ունենք ժամանակային սահմանափակում: Օրինակ՝ եթե ունենք ընտրական հանձնաժողովների 4 ներկայացուցիչ, ապա կարելի է որոշել, որ մեկը երեքին է հարց ուղղում: Մինչդեռ, եթե ունենք 7 մասնակից, ապա բոլորին հարցեր ուղղելը լրջորեն ազդում է բանավեճի տևողության վրա և կարող է այն ձանձրալի դարձնել: Նման դեպքերում կարելի է վիճակահանություն անցկացնել, թե ով ում է հարց տալու, կամ յուրաքանչյուրին տալ իրավունք ընտրելու այն անձին, ում ցանկանում է ուղղել իր հարցը: Երկրորդ դեպքում այնպիսի իրավիճակ կստեղծվի, որ թեկնածուները, ում ավելի շատ հարցեր են ուղղվել, ձեռք են բերում ավելի շատ ժամանակ բանավեճում:

Հարցադրումներ կատարելու բոլոր տարբերակները կարելի է ազատ ոճով ծրագրել բանավեճի սցենարի մեջ: Դրանք կարող են նաև բխել ընտրված թեմաներից և խնդիրներից: Հարցադրումներ կատարելու ձևը և բովանդակությունն ազդում է բանավեճի ջերմության նվազեցման կամ սաստկացման վրա:

Նյութը հասանելի է Creative Commons «Հեղինակային իրավունքների ճանաչում – նույն պայմաններով 4.0 Միջազգային» լիցենզիայի (CC BY-SA 4.0) հիման վրա: Որոշ իրավունքներ վերապահվում են ի օգուտ նյութի հեղինակ Բարտոշ Սկիրայի, ինչպես նաև Արևելք ժողովրդավարական ընկերակցության: Ստեղծագործությունը ծնվել է «Հայաստան՝ տեղական անկախ լրատվամիջոցների դերը ընտրական գործընթացում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Արևելք ժողովրդավարական ընկերակցության կողմից՝ կրառելով Լեհ-ամերիկյան ազատության հիմնադրամի միջոցները: Թույլատրվում է բովանդակության ազատ կիրառումը սույն տեղեկատվության պահպանման պայմանով, այդ թվում՝ կիրառված լիցենզիայի, իրավունքներ տիրապետողների, ինչպես նաև «Հայաստան՝ տեղական անկախ լրատվամիջոցների դերը ընտրական գործընթացում» ծրագրի մասին տեղեկատվության պահպանման պայմանով:

Լիցենզիայի բովանդակությունը հասանելի է հետևյալ կայքում՝ <https://creativecommons.org/licenses/by-sa/4.0/deed.pl>.

Տեղական անկախ լրատվամիջոցների դերը ընտրական գործընթացում՝ տեղական լրատվամիջոցների հայ լրագրողների համար դասընթաց

Կազմակերպիչ՝ **Արևելք ժողովրդավարական ընկերակցություն**

Գործընկեր կազմակերպություն՝ **Երևանի մամուլի ակումբ**

Գյումրի՝ 2017թ-ի փետրվարի 23-24

Վանաձոր՝ 2017թ-ի փետրվարի 25-26

Ծրագիրը համաֆինանսավորվել է Լեհ-ամերիկյան ազատության հիմնադրամի միջոցներով՝ RITA – փոփոխություններ տարածարշանում ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Հանուն ժողովրդավարության կրթություն հիմնադրամի կողմից:



ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԲԱՆԱՎԵՃԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Նշանակիր մշտական թիմ, որը պատասխանատու կլինի բանավեճի պատրաստման և վարման համար,

- թիմի աշխատանքը սկսիր բանավեճի **ԳԱՂԱՓԱՐԻՑ**,
- մշակիր **ԿԱՆՈՆՆԵՐԸ**, որոնք գործելու են բանավեճի ընթացքում,
- հրավիրիր **ՀԱՆԴԻՊՄԱՆԸ** բոլոր գրանցված ընտրական հանձնաժողովները: Խնդրիր, որպեսզի ներկայանան այն հանձնաժողովների ներկայացուցիչները, որոնք մասնակցելու են բանավեճին:

Ո՞րն է բանավեճի գաղափարը

Բանավեճի գաղափարը այլ կերպ նշանակում է ձև, թե ինչպես է կազմակերպվելու բանավեճը՝

- որտեղ և երբ է այն տեղի ունենալու,
- ինչքան է այն տևելու,
- արդյոք լինելու է մեկ, թե ավելի բանավեճեր,
- արդյոք լինելու է հանդիսատես, ինչպես է այն տեղում հայտնվելու և որտեղ է մնալու,
- արդյոք մասնակիցները նստած են լինելու, թե կանգնած,
- արդյոք լինելու են տեսախցիկներ, ինչպես են տեղակայված լինելու, ինչպիսին է լինելու լուսավորումը և բարձրախոսների հասանելիությունը,
- ով է հարցեր տալու. արդյոք միայն լրագրողներն են հարցեր տալու, թե նաև հանդիսատեսը,
- արդյոք բանավեճին մասնակցելու են մասնագետներ, և ինչ դեր են կատարելու,
- արդյոք ընտրական հանձնաժողովների ներկայացուցիչները միմյանց հարցեր են ուղղելու: Հիշիր, որ յուրաքանչյուր հանձնաժողով պետք է հավասար վերաբերմունքի արժանանա, որևէ մեկին չի կարելի նախապատվություն տալ:

Բանավեճի կանոնները

Ընտրական հանձնաժողովների ներկայացուցիչներին պետք է առաջարկես կոնկրետ կանոններ, որոնց համաձայն կազմակերպվելու է բանավեճը: Այդ կանոնները

սահմանում ես դու, քո խմբագրությունը, թիմը: Կանոնների սահմանումը հանձնաժողովների հայեցողությանը թողնելը կարող է հանգնեցնել քառսի և խառնաշփոթի: Կանոնների ցուցակը յուրաքանչյուր ներկայացուցչի համար պատրաստիլ թղթային տարբերակով (որպեսզի դրանք դրված լինեն յուրաքանչյուրի առջև, երբ քննարկես կանոնները) կամ էլեկտրոնային տարբերակով (որպեսզի յուրաքանչյուրի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկես):

Կանոնների մեջ ընդգրկիր՝

- **Ժամանակը** – ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչներից յուրաքանչյուրը պետք է իրազեկ լինի, թե **ինչքան ժամանակ** ունի պատասխանելու, հարցում կատարելու, պատասխան հարված տալու, վերջին խոսքն ասելու համար, և **ինչպես է այդ ժամանակը հաշվարկվելու**, ինչպես է այդ ժամանակը պահվելու բանավեճի ընթացքում, ինչպես են բանավեճի ընթացքում թեկնածուները տեղեկանալու ժամանակի սպառման մասին: Բանավեճի ընթացքում յուրաքանչյուրին պետք է հավասարաչափ ժամանակ տրամադրվի, որևէ մեկին նախապատվություն չպետք է տրվի:

Հիշիր, որ լրագրողները նույնպես ունեն սամնաված ժամանակ հարցեր տալու համար: Հանձնաժողովի յուրաքանչյուր ներկայացուցիչ պետք է ներկայացվի նույն ժամանակահատվածում: Չի կարելի մեկ թեկնածուին երկար ներկայացնել, իսկ մյուսին՝ կարճ:

Հանդիսատեսը և մասնագետները նույնպես ունեն սահմանված ժամանակ հարցադրումներ կատարելու համար:

- **հերթականությունը** – հստակեցրու, թե **ինչով է պայմանավորված** ընտրական հանձնաժողովների ներկայացուցիչների ներկայացման հերթականությունը, պատասխանների հերթականությունը, հարցադրումներ կատարելու, պատասխան հարված տալու և վերջին խոսքն ասելու հերթականությունը:

Եթե հերթականությունը որոշվելու է վիճակահանությամբ, ապա տեղեկացրու ընտրական հանձնաժողովին որտեղ և երբ է այն տեղի ունենալու:

Բանավեճից առաջ ընտրական հանձնաժողովների ներկայացուցիչների հանդիպումը

- հանդիպման ընթացքում ներկայացրու բանավեճի համար պատասխանատու թիմը,
- թիմի հետ միասին ներկայացրու բանավեճի գաղափարն ու կանոնները,

- մինչ հանդիպման ավարտը կազմակերպիչ թիմի և ընտրական հանձնաժողովները ներկայացնող անձանց կոնտակտային տվյալների՝ հեռախոսահամարների և էլեկտրոնային փոստի հասցեների, փոխանակումը:

Ուշադիր լսիր **ընտարական հանձնաժողովների ներկայացուցիչների** մեկնաբանությունները: Համաձայնվիր փոփոխություններին միայն այն պարագայում, եթե դրանց կողմ են բոլոր հանձնաժողովները:

Նյութը հասանելի է Creative Commons «Հեղինակային իրավունքների ճանաչում – նույն պայմաններով 4.0 Միջազգային» լիցենզիայի (CC BY-SA 4.0) հիման վրա: Որոշ իրավունքներ վերապահվում են ի օգուտ նյութի հեղինակ Բարտոշ Սկիբայի, ինչպես նաև Արևելք ժողովրդավարական ընկերակցության: Ստեղծագործությունը ծնվել է «Հայաստան՝ տեղական անկախ լրատվամիջոցների դերը ընտրական գործընթացում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Արևելք ժողովրդավարական ընկերակցության կողմից՝ կրառելով Լեհ-ամերիկյան ազատության հիմնադրամի միջոցները: Թույլատրվում է բովանդակության ազատ կիրառումը սույն տեղեկատվության պահպանման պայմանով, այդ թվում՝ կիրառված լիզենզիայի, իրավունքներ տիրապետողների, ինչպես նաև «Հայաստան՝ տեղական անկախ լրատվամիջոցների դերը ընտրական գործընթացում» ծրագրի մասին տեղեկատվության պահպանման պայմանով:

Լիցենզիայի բովանդակությունը հասանելի է հետևյալ կայքում՝ <https://creativecommons.org/licenses/by-sa/4.0/deed.pl>.

Տեղական անկախ լրատվամիջոցների դերը ընտրական գործընթացում՝ տեղական լրատվամիջոցների հայ լրագրողների համար դասընթաց

Կազմակերպիչ՝ Արևելք ժողովրդավարական ընկերակցություն

Գործընկեր կազմակերպություն՝ Երևանի մամուլի ակումբ

Գյումրի՝ 2017թ-ի փետրվարի 23-24

Վանաձոր՝ 2017թ-ի փետրվարի 25-26

Ծրագիրը համաֆինանսավորվել է Լեհ-ամերիկյան ազատության հիմնադրամի միջոցներով՝ RITA – փոփոխություններ ստարածարշանում ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Հանուն ժողովրդավարության կրթություն հիմնադրամի կողմից:



ԲԱՆԱՎԵՃ ՖԵՅՍԱԲՈՒՔՅԱՆ ԷԶՈՒՄ

Դժվար է պատկերացնել մեր օրերում կազմակերպել նախընտրական բանավեճ առանց համացանցի կիրառման:

- Շնորհիվ համացանցի արագ կապ հաստատելու հնարավորություն ունենք մեզ հետևող անձանց հետ, ովքեր հետևյալ դերն են կատարում՝

- մեր խորհրդատուներն են՝ փնտրելու թեմաներն ու խնդիրները,

- գնահատում են մեր առաջարկները,

- կարող են դառնալ բանավեճի ընթացքում մասնակից-հանդիսատես կամ ստանձնել հարց տվողի դեր:

- Մեզ հետևող անձանց ներգրավումը ակտիվ լինելու մեր կայքում կամ հանրային պրոֆիլում բանավեճը պատրաստող թիմի կարևորագույն խնդիրներից մեկն է:

- Եթե ունես ՖԵՅՍԱԲՈՒՔՅԱՆ էջ, ապա բանավեճի կազմակերպման ընթացքում փոխիր միջոցառմանը համապատասխան պրոֆիլի նկարը և ֆոնը:

- Եթե չունես հանրային պրոֆիլ, ապա ակտիվացրու այն՝ նպատակ ունենալով ներգրավել հանրությանը միասին կազմակերպելու նախընտրական բանավեճը՝

- պրոֆիլի էջում մշակիր և տեղադրիր բանավեճի լոգոն,

- ֆոնը, որը կօգտագործես պրոֆիլում, պետք է հասարակ և մատչելի կերպով իրազեկի, որ հրավիրում ենք միասին կազմակերպելու բանավեճը,

- պրոֆիլն այցելած կողմը (ընթերցողը/ հանդիսատեսը) պետք է ստանա ըմբռնելի ուղերձ, որ մեզ համար էական նշանակություն ունի իր արձագանքը:

- Պատրաստիր հատուկ գովազդային պոստ, լավագույն տարբերակը տեսանյութն է, որում՝

- կիրավիրես ընթերցողներին/ հանդիսատեսին աջակցելու բանավեճի կազմակերպումը,

- կիրազեկես ընթերցողներին/ հանդիսատեսին՝ որտեղ և երբ է կայանալու միջոցառումը,

- կխրախուսես ընթերցողներին/ հանդիսատեսին այցելելու քո ֆեյսբուքյան պրոֆիլը և հավանելու էջը:

Ֆեյսբուքյան պրոֆիլում գովազդային պոստից բացի՝ հիշիր միաժամանակ հեռուստաընկերությունում/ թերթում իրազեկել տվյալ գաղափարի մասին, ֆեյսբուքյան էջի բացման մասին, խրախուսիր մասնակցելու բանավեճին պրոֆիլի միջոցով:

Պոստերը

Պրոֆիլում տեղադրվող տեսանյութերն ավելի երկար քան յուրաքանչյուրը 90 վայրկյան չպետք է տևեն:

Պրոֆիլում տեղադրվող պոստերը ավելի երկար քան յուրաքանչյուրը 1000 նշան չպետք է ունենան:

Պրոֆիլի բացման պահին պետք է պատրաստած ունենաս առնվազն 3 պոստ՝ լուսանկարների, իսկ ավելի լավ՝ տեսանյութերի տեսքով:

- առաջին պոստում հրավիրի քո ընթերցողներին/հանդիսատեսին աջակցելու բանավեճի կազմակերպումը. խնդիր առաջարկելու թեմաներ և խնդիրներ, որոնց պետք է անդրադարձ կատարվի ընտրական հանձնաժողովների հետ հանդիպմանը: Տեղեկացրու, թե որ ընտրական հանձնաժողովներն ես հրավիրում,
- երկրորդում՝ տեղեկացրու որտեղ և երբ է կայանալու բանավեճը: Եթե հրավիրում ես մարդկանց որպես հանդիսատես, սահմանիր մասնակցության պայմանները,
- երրորդում իրազեկիր, թե ինչ փուլում են նախապատրաստական աշխատանքները, արդյոք արդեն հանդիպել, թե դեռ պետք է հանդիպես ընտրական հանձնաժողովներին: Եթե հնարավոր է ներկայացրու բանավեճի մասնակիցներին՝ ընտրական հանձնաժողովների ներկայացուցիչներին: Հիշիր, որ բոլոր թեկնածուներն այդ պոստում ներկայանում են նման սկզբունքներով:

Կարգավորումների միջից ընտրիր հյուրերի կողմից պոստեր կատարելու հնարավորության տարբերակը՝

1. յուրաքանչյուրը կարող է պոստ ավելացնել ցանկացած պահի

կամ

2. ադմինիստրատորն է որոշում պոստի հրապարակման մասին:

Ընտրությունը պատկանում է բանավեճի կազմակերպիչներին. արդյոք ցանկանում ես, որպեսզի թույլատրվեն բոլոր գրառումները, անկախ այն բանից, որ վիրավորական են կամ մեղադրանք են ներկայացնում, թե ուզում ես վերահսկել այն, թե ինչ է հայտնվելու Ֆեյսբուքում:

Եթե տիրապետում ենք ֆինանսական միջոցների, ապա տեղադրված պոստերից յուրաքանչյուրը կարող ենք տարածել գովազդների մենեջեր կարգավորման միջոցով:

Բանավեճի պրոֆիլում համապատասխան արձագանքներ չհայտնվելու պարագայում հետևյալ կերպ կարող ենք խրախուսել օգտատերերին՝

- մեկնում ենք տարածք, որտեղ զրուցում ենք մարդկանց հետ, իրագրելում ենք բանավեճի կայացման մասին,

- տեսագրում ենք մեր զրուցակիցներին կամ լուսանկարում և ձայնագրում ենք նրանց պատասխանները, թեմաները և խնդիրները, որոնց նրանց կարծիքով պետք է անդրադարձ կատարել բանավեճի ընթացքում: Թույլտվություն ենք խնդրում նյութի հրապարակման համար մեր պրոֆիլում,

- հավաքված նյութը հրապարակում ենք մեր պրոֆիլում:

ՖԵՅՍԲՈՒՔՆ ԱՊՐՈՒՄ Է ՕՐՈՎ ԵՎ ՏՎՅԱԼ ՊԱՀՈՎ

1. ՀԵՏԵՎԻՐ ՕԳՏԱՏԵՐԵՐԻ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆԸ:
2. ՀԵՏԵՎԻՐ ՈՉ ՄԻԱՅՆ ԱՎԵԼԱՑՎԱԾ ՊՈՍՏԵՐԻՆ, ԱՅԼ ՆԱԵՎ ՊՈՍՏԵՐԻ ՏԱԿ ԱՐՎԱԾ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ:
3. ՍՏԵՂԾԻՐ ՊՈՍՏ 10 ԱՄԵՆԱՇԱՏ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ/ ԹԵՄԱՆԵՐԻ/ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՑԱՆԿՈՎ – այդ ցանկը կարող է փոխվել, հիշիր այն թարմացնելու մասին:
4. ՖԵՅՍԲՈՒՔՈՒՄ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ Է:
 - ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՕՐ ՊԵՏՔ Է ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՊՈՍՏ ԿԱՏԱՐՎԻ
 - ԵԹԵ ՆՈՐ ԹԵՄԱ ՉՈՒՆԵՍ, ԳՐԻՐ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՆ ԸՆԹԱՆՈՒՄ ԲԱՆԱՎԵՃԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ
 - ՄԻ ԱՆՀԱՆԳՍՏԱՑԻՐ ԱՅՆ ԲԱՆԻ ՀԱՄԱՐ, ՈՐ ՈՐՈՇ ՊՈՍՏԵՐ ՆՄԱՆ ԵՆ ՆԱԽՈՐԴ ՕՐԵՐԻՆ ԱՐՎԱԾ ՊՈՍՏԵՐԻՆ:

Նյութը հասանելի է Creative Commons «Հեղինակային իրավունքների ճանաչում – նույն պայմաններով 4.0 Միջազգային» լիցենզիայի (CC BY-SA 4.0) հիման վրա: Որոշ իրավունքներ վերապահվում են ի օգուտ նյութի հեղինակ Բարտոշ Սկիրայի, ինչպես նաև Արևելք ժողովրդավարական ընկերակցության: Ստեղծագործությունը ծնվել է «Հայաստան՝ տեղական անկախ լրատվամիջոցների դերը ընտրական գործընթացում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Արևելք ժողովրդավարական ընկերակցության կողմից՝ կրառելով Լեհ-ամերիկյան ազատության հիմնադրամի միջոցները: Թույլատրվում է բովանդակության ազատ կիրառումը սույն տեղեկատվության պահպանման պայմանով, այդ թվում՝ կիրառված լիցենզիայի, իրավունքներ տիրապետողների, ինչպես նաև «Հայաստան՝ տեղական անկախ լրատվամիջոցների դերը ընտրական գործընթացում» ծրագրի մասին տեղեկատվության պահպանման պայմանով:

Լիցենզիայի բովանդակությունը հասանելի է հետևյալ կայքում՝
<https://creativecommons.org/licenses/by-sa/4.0/deed.pl>.

Տեղական անկախ լրատվամիջոցների դերը ընտրական գործընթացում՝ տեղական լրատվամիջոցների հայ լրագրողների համար դասընթաց

Կազմակերպիչ՝ **Արևելք ժողովրդավարական ընկերակցություն**

Գործընկեր կազմակերպություն՝ **Երևանի մամուլի ակումբ**

Գյումրի՝ 2017թ-ի փետրվարի 23-24

Վանաձոր՝ 2017թ-ի փետրվարի 25-26

Ծրագիրը համաֆինանսավորվել է Լեհ-ամերիկյան ազատության հիմնադրամի միջոցներով՝ RITA – փոփոխություններ ստրատեգիայում ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Հանուն ժողովրդավարության կրթություն հիմնադրամի կողմից:



ՃՐԱԳՆԵՐՆ ԸՆԴԴԵՍ ՄԱՐԴԿԱՆՑ

Պլատֆորմա Օրիվատելչսկա («Քաղաքացիական պլատֆորմ») կուսակցության պատգամավոր Լիզիա Կրանսկայի հետ զրուցում է Ռոբերտ Մազուրեկը:

- Հարգելի պատգամավոր:

- Տիկին պատգամավոր (թարգմանչի կողմից՝ լեհերենում արտահայտված է պատգամավոր բառի իգական սեռը):

- Ուրեմն տիկին պատգամավոր (...), մեր առջև դրված է «Օրենք և արդարություն» կուսակցության ծրագիրը, որը Լեհաստանի մեծ փոփոխություն է խոստանում՝ 50 նոր կամուրջ:

- ... երեք միլիոն բնակարան նույնպես կտա՞: Նաև նախագահը խոստացել է, որ ծնվելու է 200 հազար երեխա: Այդ բոլոր խոստումներն այնպիսի մակարդակի են, որ խոսքերն ավելորդ են: Մարդկանց ծաղրում եք:

- ... հենց Վիսլա գետի վրա կառուցվելու է 15 կամուրջ:

- (ծիծաղ) Եվ որտեղ են նրանք այդ ամենը ստեղծելու:

- Մոդերնիզացնելու են 11 օդանավակայան, կառուցելու ինը նորը:

- Իսկ միզուցե միանգամի՞ց 49 օդանավակայան: Յուրաքանչյուր նախկին վոյևոդային քաղաքում մեկ հատ:

- ... կառուցվելու են օդանավակայաններ Օլշտինում և Բիալիստոկում:

- Ի՞նչ տնտեսական հիմնավորում ունի Օլշտինում և Բիալիստոկում օդանավակայանների կառուցումը: Խնդրում եմ ասացեք նաև, թե ինչպես են նրանք այդ բոլոր օդանավակայանները պահելու, ինչով են կառուցելու դրանք:

- «Միջոցները վերցվելու են բյուջեից (32%), Եվրամիության գումարներից (39%) և մասնավոր կապիտալից (29%):

- Պիսին (թարգմանչի կողմից՝ հապավում Պրավո և Սպրավեդլիվոստ բառերից՝ թարգմանաբար օրենք և արդարություն) հաջողություն եմ մաղթում այդ հրաշքների իրականացման գործում, բայց սա պիտանի չէ լուրջ զրույցի համար:

- Ինչո՞ւ:

- Որովհետև բացարձակապես անիրական գաղափարներ են: Մարդ, ով նման խոստումներ է տալիս, խաբում է լեհերին:

- Այդ մարդը Դոնալդ Տրամփն է:

- Ի՞նչ:

- Քանի դեռ շատ չեք խոսացել և ձեզ համար գլխացավանք ստեղծել, ես խոստովանեմ, որ մանիպուլյացիայի եմ դիմել: Մեջբերում էի 2007թ-ի Պլատֆորմա Օբիվատելսկայի «Մեծ կառուցումների ազգային ծրագիրը»:

- Ահ... (լռություն): Պետք է ընդունեք, որ Պիսի կատարմամբ այդ ծրագրերն անիրատեսական են հնչում, իսկ Ձեր նշած փաստաթուղթը ներկայացնում էր ամբողջը, այսինքն ծրագրերը և դրանց ֆինանսավորման ձևերը: Դրանով ենք Պիսից տարբերվում: Բացի այդ, այն ստեղծվել է տնտեսական այլ իրավիճակում:

- Ձեր կարծիքով այդ ժամանակ Օլշտինում և Բիալիստոկում օդանավակայանների կառուցումը հիմնավորվա՞ծ էր:

- Անիրատեսական է, ընդունում եմ:

- Այսինքն խաբե՞լ էք մարդկանց:

- Այդպես չի կարելի ասել, միգուցե այն անձն, ով դա պատրաստել էր, ունեցել է իր հաշվարկները:

Տեղական անկախ լրատվամիջոցների դերը ընտրական գործընթացում` տեղական լրատվամիջոցների հայ լրագրողների համար դասընթաց

Կազմակերպիչ` Արևելք ժողովրդավարական ընկերակցություն

Գործընկեր կազմակերպություն` Երևանի մամուլի ակումբ

Գյումրի` 2017թ-ի փետրվարի 23-24

Վանաձոր` 2017թ-ի փետրվարի 25-26

Ծրագիրը համաֆինանսավորվել է Լեհ-ամերիկյան ազատության հիմնադրամի միջոցներով` RITA – փոփոխություններ տարածարշանում ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Հանուն ժողովրդավարության կրթություն հիմնադրամի կողմից:

